26 սեպտեմբերի 2019 թվականի N 1298 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 217-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 14-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «ԷՅ ԸՆԴ ԷՄ ՌԵՅՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 217-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածը 52-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 53-57-րդ կետերով.

«

53	7311	Սև մետաղից տարողություն ածխաթթու գազի /LCO2/ պահպանման համար 30մ3 ծավալով	կգ	13 150	22 800 000
54	7304	Չժանգոտվող պողպատից խողովակներ՝ կցամասերով	կգ	70	1 416 000
55	7606	Պատի ալյումինե երկշերտ ներկած պանելներ մեկուսիչ նյութով /ISO WALL PANELS	կգ	467,5	495 883
56	7606	Ալյումինե երկշերտ ներկած պանելներ մեկուսիչ նյութով (ալիքաձև) / COMPOSITE PANELS	կգ	5 980,5	11 346 912
57	7308	Մետաղյա դռներ շրջանակների հետ, կողպեքների, բռնակների, էլ. լեզվակների, դռները փակելու ավտոմատ սարքերի հետ միասին (չհավաքված վիճակում) 17 հատ երկփեղկանի, 44 հատ մեկփեղկանի	կգ	5 383	27 272 208

».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «343 476 468» թիվը փոխարինել «406 807 471» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ